# Արձանագրություն N 2

## ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-25/48 ծածկագրով «Երևանի N 156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.08.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Կոմիտասյան
Հ. Գինովյան
Ա. Հյուսիսյան
Է. Առուստամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

### 1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Քոչարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամ-կետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի օգոստոսի 15-ին, ժամը 11:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե, կապի միջոց, էլեկտրոնային փոստի հասցե | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «“ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ | ք. Երևան, Կոմիտաս 54բ (093) 80 00 09 ekspertizaproektov@mail.ru | 1 900 000 | 1 900 000 | 0 | 1 900 000 |

1.2 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

## 2. Մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման մասին

---

(Ա. Քոչարյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցիի՝ «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են իրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

## 3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

---

(Ա. Քոչարյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակցիի հայտը գնահատվել է բավարար:

3.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց “ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

## 4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Ա. Քոչարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

## 5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Քոչարյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –6, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ա. Քոչարյան

Անդամ՝ ---------------------------------------- Տ. Կոմիտասյան

---------------------------------------- Հ. Գինովյան

---------------------------------------- Ա. Հյուսիսյան

---------------------------------------- Է. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան